

AGREEMENT FOR SERVICES FOR STRATEGIC URBAN DEVELOPMENT FRAMEWORK

**ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

PROJECT: ACADEMIC CITY

ԾՐԱԳԻՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ

**Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science, Culture and
Sports of the Republic of Armenia**

**Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**

as the Client

որպես Պատվիրատու

RSUP Rabe Strategic Urban Planning

ԱրևսնուՓի Ըրաբե Սթրաթիջիք Ուրբան Փլենինգ

as the Consultant

որպես Խորհրդատու

և

Academic City Fund

Ակադեմիական քաղաք հիմնադրամ

as the Beneficiary

որպես Շահառու

THIS AGREEMENT FOR SERVICES FOR STRATEGIC URBAN DEVELOPMENT FRAMEWORK (the “Agreement”) is dated October 17, 2024, and made by and among:

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍՈՒՑՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (այսուհետ՝ «Պայմանագիր») կնքվել է 2024 թվականի հոկտեմբերի 17-ին հետևյալ կողմերի միջև.

(1) HIGHER EDUCATION AND SCIENCE COMMITTEE OF THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORTS OF THE REPUBLIC OF ARMENIA (the “Client”) with address at 22 Orbeli Brothers Street, Yerevan 0028, Republic of Armenia, represented by its Chairman Sargis Hayotsyan (Identification Card No. 011564788), acting on the basis of the Client’s charter;

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ (այսուհետ՝ «Պատվիրատու»)՝ իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0028, Օրբելի եղբայրների փող. 22՝ ի դեմս նախագահ Սարգիս Հայոցյանի (նույնականացման քարտ համար՝ 011564788), որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա,

(2) RSUP RABE STRATEGIC URBAN PLANNING (the “Consultant”), organized and existing under the laws of the Federal Republic of Germany as a sole proprietorship company and with address at Karl-Marx-Strasse 35a, 14482 Potsdam, Republic of Germany, represented by its Managing Director Jochen Rabe (Passport No. C3MX7L098), acting on the basis of the Consultant’s charter; and

ԱՐԷՍՅՈՒՓԻ ԸՄՔԵ ՍԹՐԱԹԻՋԻՔ ՈՒՐԲԱՆ ՓԼԵՆԻՆԳ (այսուհետ՝ «Խորհրդատու»)՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքների համաձայն հիմնադրված և գործող անհատ ձեռնարկատիրական ընկերություն, հասցե՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Պոտսդամ 14482, Կարլ-Մարքս-Շտրասսե 35՝ ի դեմս գործադիր տնօրեն Յոհան Բաբեի (անձնագիր համար՝ C3MX7L098), որը գործում է Խորհրդատուի կանոնադրության հիման վրա, և

(3) ACADEMIC CITY FUND (the “Beneficiary”) with registration number 222.160.1315877 and with address at Gitavan-2, Ashtarak 0204, Republic of Armenia, represented by its Director Armen Simonyan (Identification Card No. 010663086), acting on the basis of the Beneficiary’s charter.

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՀԻՄՆԱԴՐԱՄ (այսուհետ՝ «Շահառու»)՝ գրանցման համար՝ 222.160.1315877, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Աշտարակ 0204, Գիտավան-2՝ ի դեմս տնօրեն Արմեն Միմոնյանի (նույնականացման քարտ համար՝ 010663086), որը գործում է Շահառուի կանոնադրության հիման վրա:

The Client, the Consultant, and the Beneficiary are sometimes referred to herein individually as a “Party” and together as “Parties”.

Պատվիրատուն, Խորհրդատուն և Շահառուն այս Պայմանագրում երբեմն առանձին կոչվում են «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր»:

WHEREAS

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

(i) The Government of the Republic of Armenia (the “Government”) has undertaken the design, construction and development of the Academic City Project (the “Project”).

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ «Կառավարություն») նախաձեռնել է Ակադեմիական քաղաքի ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») նախագծումը, կառուցումը և զարգացումը:

(ii) As a result of procurement procedure, the Government has approved, by Government Resolution No. 1516-A, dated September 26, 2024, the sole source purchase from the Consultant of strategic urban development framework services for the Project.

(iii) The Consultant is a strategic urban planning and management consultancy services provider with technical capabilities to provide the Services, as defined below, to the Client and the Beneficiary.

Գնումների ընթացակարգի արդյունքում Կառավարությունը 2024 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1516-Ա որոշմամբ հաստատել է Ծրագրի իրականացման համար Խորհրդատուից քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակման ծառայությունների գնումը՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

Խորհրդատուն քաղաքաշինական ռազմավարական նախագծման և կառավարման խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպություն է, որն ունի Պատվիրատուին և Շահառուին ստորև սահմանված Ծառայությունները մատուցելու տեխնիկական հնարավորություններ:

NOW, THEREFORE, THE PARTIES AGREE ON THE FOLLOWING:

ՈՒՍՏԻ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

1 Subject of the Agreement

Pursuant to this Agreement, the Consultant agrees to provide to the Client professional services in connection with preparing a strategic urban development framework for the Project and any ancillary services, as defined in Article 2.1 below, and the Client agrees to pay for such services.

Պայմանագրի առարկան

Սույն Պայմանագրի համաձայն՝ Խորհրդատուն համաձայնում է Պատվիրատուին տրամադրել Ծրագրի համար քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակման հետ կապված մասնագիտական ծառայություններ և ցանկացած օժանդակ ծառայություն, ինչպես սահմանված է ստորև՝ 2.1 հոդվածում, իսկ Պատվիրատուն համաձայնում է վճարել այդ ծառայությունների համար:

2 Specification of Services

2.1 Scope of Services

The Consultant shall perform such services relating to the Project as set out in Appendix No. 1 (*Scope of Services*) of this Agreement (the “**Services**”).

Ծառայությունների նկարագիր

Ծառայությունների շրջանակը

Խորհրդատուն պետք է մատուցի Ծրագրին առնչվող այնպիսի ծառայություններ, որոնք սահմանված են սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) (այսուհետ՝ «**Ծառայություններ**»):

2.2 Area of Provision of Services

The Project shall be implemented within, and the Services shall be provided for the territory of the Project in the 17th District of Yerevan, Republic of Armenia, and Hayfilm area as relevant.

Ծառայությունների մատուցման տարածքը

Ծրագիրը պետք է իրականացվի, և Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի համար նախատեսված՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 17-րդ թաղամաս հասցեում գտնվող տարածքում և ըստ կիրառելիության՝ Հայֆիլմի տարածքում:

2.3 Beneficiary of Services

The Services shall be provided for the implementation of the Project and for the benefit of the Beneficiary.

2.4 Subcontractors

The Consultant shall have the right to engage, at its expense, third parties in the performance of certain tasks for the provision of the Services, provided that the Consultant remains fully responsible for the performance and completion of all subcontracted work in accordance with the terms and conditions of this Agreement. The Consultant shall notify the Client in writing of any subcontracting arrangements, including the identity of the subcontractor(s) and the scope of work to be assigned to such subcontractor(s), prior to entering into any subcontracting agreements. The Client reserves the right to approve or reject any proposed subcontractor(s) at its sole discretion within seven calendar days of being notified of any subcontracting arrangements. The Consultant shall ensure that all subcontractors observe the terms of this Agreement and shall be liable for any breaches of such terms by subcontractor(s). The subcontracting of any work shall not relieve the Consultant of any of its obligations and liabilities under this Agreement.

2.5 Consultant’s Responsibilities

The Consultant shall perform the Services and carry out its obligations hereunder with all due diligence, efficiency, and economy, in accordance with generally accepted professional requirements and practices and shall observe sound management practices and employ qualified personnel. The

Ծառայությունների շահառու

Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի իրականացման շրջանակներում և ի շահ Շահառուի:

Ենթակապալառուներ

Խորհրդատուն իրավունք ունի Ծառայությունների մատուցման համար որոշակի առաջադրանքների կատարման գործում իր հաշվին ներգրավելու երրորդ անձանց՝ պայմանով, որ Խորհրդատուն լիովին պատասխանատու է բոլոր պատվիրակված աշխատանքների կատարման և ավարտի համար՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան: Խորհրդատուն գրավոր ծանուցում է Պատվիրատուին՝ ենթակապալառու ներգրավելու ցանկացած պայմանավորվածության մասին, այդ թվում՝ ենթակապալառուի (ենթակապալառուների) ինքնության և այդ ենթակապալառուին (ենթակապալառուներին) հանձնարարվելիք աշխատանքների շրջանակի մասին՝ նախքան ենթակապալի պայմանագիր կնքելը: Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ հաստատելու կամ մերժելու ենթակապալառուի (ենթակապալառուների) առաջարկվող թեկնածությունը՝ ենթակապալառու ներգրավելու ցանկացած պայմանավորվածության մասին ծանուցվելուց հետո յոթ օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդատուն պետք է ապահովի, որ բոլոր ենթակապալառուները պահպանեն սույն Պայմանագրի պայմանները, և պատասխանատվություն է կրում ենթակապալառուի (ենթակապալառուների) կողմից այդ պայմանների ցանկացած խախտման համար: Ենթակապալառուին (ենթակապալառուներին) որևէ աշխատանքի պատվիրակմամբ Խորհրդատուն չի ազատվում սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորություններից և պատասխանատվություններից:

Խորհրդատուի պարտականությունները

Խորհրդատուն պետք է մատուցի Ծառայությունները և կատարի Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները բարեխղճորեն, արդյունավետորեն և խնայողաբար՝ ընդհանուր կերպով ընդունված մասնագիտական պահանջների և պրակտիկայի համաձայն, և պետք է որդեգրի կառավարման որակյալ գործելակերպ և աշխատանքի

Consultant shall always act, in respect of any matter relating to this Agreement or to the Services, as faithful adviser to the Client, and shall at all times support and safeguard the Client's and the Beneficiary's legitimate interests.

2.6 Additional Services

Any services to which this Agreement does not extend shall be contracted in writing with the Client or the Beneficiary with the cost for such additional services being agreed in writing with the Client or the Beneficiary prior to the provision of the services.

3 **Compensation and Payment for the Services**

3.1 As compensation in full to the Consultant for the satisfactory performance of all Services, the Client agrees to pay the Consultant Euro 261.950 (inclusive of taxes) (the "**Services Fee**").

3.2 The Services Fee, in accordance with the scope and deliverables outlined in Appendix No. 1 (*Scope of Services*) of this Agreement, shall include out-of-pocket expenses of the Consultant, cost of travel, workshop attendance, and any ancillary expenses of the Consultant incurred in connection with the provision of the Services.

3.3 Any addition to the scope, deliverables, or delivery period outlined in Appendix No. 1 (*Scope of Services*) of this Agreement, shall be undertaken by the Consultant for a reasonable fee to be mutually agreed upon by the Client and the Consultant.

3.4 The Services Fee shall be paid in Euro.

3.5 The Consultant shall be responsible for and shall pay (or cause to be paid) all taxes imposed upon its net income and payroll taxes.

ընդունի որակավորված անձնակազմի: Խորհրդատուն պետք է սույն Պայմանագրին կամ Ծառայություններին վերաբերող ցանկացած հարցի առնչությամբ միշտ հանդես գա որպես Պատվիրատուի հավատարիմ խորհրդատու և միշտ աջակցի Պատվիրատուի և Շահառուի օրինական շահերի իրականացմանը և պաշտպանի դրանք:

Լրացուցիչ ծառայություններ

Սույն Պայմանագրում չներառված ցանկացած ծառայության վերաբերյալ պետք է գրավոր համաձայնություն ձեռք բերվի Պատվիրատուի կամ Շահառուի հետ՝ պայմանով, որ այդ լրացուցիչ ծառայությունների արժեքը պետք է գրավոր համաձայնեցվի Պատվիրատուի կամ Շահառուի հետ՝ նախքան ծառայությունների մատուցումը:

Ծառայությունների համար փոխհատուցում և վճարում

Որպես ամբողջական փոխհատուցում բոլոր Ծառայությունների՝ բավարար մակարդակով կատարման համար՝ Պատվիրատուն համաձայնում է վճարել Խորհրդատուին 261.950 եվրո (ներառյալ հարկերը) (այսուհետ՝ «**Ծառայությունների վճար**»):

Ծառայությունների վճարը, համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) նշված ծավալների և ներկայացվելիք նյութերի, պետք է ներառի Խորհրդատուի ընթացիկ ծախսերը, ճանապարհորդության ծախսերը, աշխատաժողովներին մասնակցությունը և Խորհրդատուի ցանկացած այլ ծախս, որը կատարվել է Ծառայությունների մատուցման կապակցությամբ:

Սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) նշված ծավալի, ներկայացվելիք նյութերի կամ ներկայացման ժամկետի հետ կապված ցանկացած ընդլայնում Խորհրդատուի կողմից պետք է իրականացվի ինելամիտ վճարի դիմաց, որը փոխադարձաբար կհամաձայնեցվի Պատվիրատուի և Խորհրդատուի կողմից:

Ծառայությունների վճարը պետք է վճարվի եվրոյով:

Խորհրդատուն պետք է կրի և վճարի (կամ նպաստի, որ վճարվեն) բոլոր հարկերը, որոնք գանձվում են իր գույտ շահույթից և աշխատավարձերից:

3.6 The Client and the Consultant agree that the Consultant shall receive payments 30 calendar days after issuing the respective invoices for the First, Second and Third Payments as defined below. For the Second and Third Payments, the Client must confirm in writing, before the Consultant will be able to issue the respective invoice, that neither the Client nor the Beneficiary has any objections as to the quality or adequacy of such portion of the Services for which the Consultant is to submit an invoice.

3.7 If the payment is not received on the account of the Consultant within 30 calendar days after issuing an invoice, the Services shall be suspended until payment is received.

3.8 Payment schedule of the Services Fee shall be as follows:

Strategic Urban Development Framework

First Payment – 40% of the Services Fee upon execution of the Agreement

Second Payment – 30% of the Services Fee following trip #03 in week 15

Third Payment – 30% of the Services Fee upon submission of final deliverables.

4 Payments from the Client

All payments to be made under this Agreement shall be made in cleared funds, without any deduction of cash discount or set-off and free and clear of and without deduction for or on account of any taxes, levies, imports, duties, charges, fees, and withholdings of any nature now or hereafter imposed by any governmental, fiscal, or other authority save as required by law. If a Party to this Agreement is compelled to make any such deduction, it will pay to the receiving Party such additional amounts as are necessary to

Պատվիրատուն և Խորհրդատուն համաձայնում են, որ Խորհրդատուն վճարումներն ստանալու է ստորև սահմանված՝ Առաջին, Երկրորդ և Երրորդ վճարումների համար համապատասխան հաշիվ-ապրանքագրերը տրամադրելուց 30 օրացուցային օր հետո: Երկրորդ և Երրորդ վճարման համար Խորհրդատուի կողմից համապատասխան հաշիվ-ապրանքագիրը տրամադրվելուց առաջ՝ Պատվիրատուն պետք է գրավոր հաստատի, որ ոչ Պատվիրատուն, ոչ էլ Շահառուն Ծառայությունների այն մասի որակի կամ համապատասխանության առնչությամբ, որի համար Խորհրդատուն հաշիվ-ապրանքագիր է ներկայացնելու::

Եթե հաշիվ-ապրանքագիրը տրամադրելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում Խորհրդատուի հաշվին վճարումը չի ստացվում, ապա Ծառայությունները կկասեցվեն մինչև վճարումը ստանալը:

Ծառայությունների վճարի վճարման ժամանակացույցը հետևյալն է.

Քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակ

Առաջին վճարում – Ծառայությունների վճարի 40%-ը՝ Պայմանագրի ստորագրումից հետո

Երկրորդ վճարում – Ծառայությունների վճարի 30%-ը՝ 15-րդ շաբաթվա մեջ 3-րդ այցից հետո

Երրորդ վճարում – Ծառայությունների վճարի 30%-ը՝ ներկայացվող նյութերի վերջնական հանձնումից հետո:

Պատվիրատուի կողմից կատարվող վճարումները

Սույն Պայմանագրի համաձայն կատարվող բոլոր վճարումները պետք է կատարվեն անմիջապես հասանելի միջոցներով, առանց վաղաժամ վճարման կամ հաշվանցման հետ կապված որևէ նվազեցման և առանց որևէ հարկի, գանձման, ներմուծման տուրքի, վճարի և ցանկացած այլ պահման առնչությամբ նվազեցման, որոնք այս պահին կամ հետագայում կիրառվում են որևէ պետական, հարկաբյուջետային կամ այլ մարմնի կողմից՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Եթե սույն Պայմանագրի Կողմը պարտավոր է կատարել որևէ այդպիսի նվազեցում, ապա այն ստացող Կողմին պարտավոր է

ensure receipt by the receiving Party of the full amount which that Party would have received but for the deduction

The Parties acknowledge and agree that, under the applicable VAT laws of the Republic of Armenia, the Services provided by the Consultant to the Client under this Agreement may be subject to the reverse charge mechanism. The Consultant shall not charge VAT or similar tax on the invoices issued to the Client for the Services subject to the reverse charge mechanism. Where required by the applicable laws and practice, the Consultant shall ensure that all invoices issued to the Client for the Services subject to the reverse charge mechanism include a clear statement that the reverse charge mechanism applies, the Client's VAT identification number, and the Consultant's VAT identification number. In the event that any VAT is deemed chargeable on the Services under this Agreement and such VAT is not subject to the reverse charge mechanism, the Consultant shall, where required by the applicable laws and practice or the Client, issue a valid VAT invoice, and the Client shall pay such VAT in addition to the agreed price. The Client agrees to account for and/or pay any applicable VAT or similar tax on the Services received from the Consultant, in accordance with the laws and regulations of the Republic of Armenia. The Client shall indemnify and hold the Consultant harmless from any liability, penalties, or costs arising from the Client's failure to account for and/or pay applicable VAT or similar tax.

5 Adjourment

The Client may, by giving a notice in writing to the Consultant, adjourn the whole or any part of the Project at any time. In the event of

վճարել այնպիսի լրացուցիչ գումար, որն անհրաժեշտ է՝ ապահովելու համար, որ ստացող Կողմն ամբողջությամբ ստանա այն գումարը, որը կստանար առանց նվազեցման:

Կողմերն ընդունում և համաձայնում են, որ ԱԱՀ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքների համաձայն՝ Խորհրդատուի կողմից Պատվիրատուին սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունները կարող են ենթակա լինել հակադարձ վճարման մեխանիզմի: Խորհրդատուն չպետք է հաշվարկի ԱԱՀ կամ համանման հարկ Պատվիրատուին ներկայացվող՝ հակադարձ վճարման մեխանիզմի ենթակա Ծառայությունների համար տրամադրված հաշիվ-ապրանքագրերի առնչությամբ: Կիրառելի օրենքներով և պրակտիկայով պահանջվելու դեպքում Խորհրդատուն պետք է ապահովի, որ Պատվիրատուին տրամադրված բոլոր հաշիվ-ապրանքագրերը, որոնք ենթակա են հակադարձ վճարման մեխանիզմի, ներառեն հստակ նշում՝ հակադարձ վճարման մեխանիզմի կիրառման, Պատվիրատուի ԱԱՀ նույնականացման համարի և Խորհրդատուի ԱԱՀ նույնականացման համարի մասին: Այն դեպքում, երբ սույն Պայմանագրով Ծառայությունների համար պետք է հաշվարկվի ԱԱՀ, և այդ ԱԱՀ-ն ենթակա չէ հակադարձ վճարման մեխանիզմի, Խորհրդատուն կիրառելի օրենքներով և պրակտիկայով կամ Պատվիրատուի կողմից պահանջվելու դեպքում պետք է տրամադրի վավեր ԱԱՀ-ի հաշիվ-ապրանքագիր, և Պատվիրատուն պետք է վճարի ԱԱՀ՝ ի հավելումն համաձայնեցված գնի: Պատվիրատուն համաձայնում է հաշվառել և (կամ) վճարել Խորհրդատուից ստացված Ծառայությունների առնչությամբ ցանկացած կիրառելի ԱԱՀ կամ համանման հարկ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին համապատասխան: Պատվիրատուն պետք է փոխհատուցի և Խորհրդատուին գերծ պահի ցանկացած պատասխանատվությունից, տույժից կամ ծախսից, որը Պատվիրատուի կողմից կիրառելի ԱԱՀ-ն կամ համանման հարկը չհաշվառելու և (կամ) չվճարելու հետևանք է:

Հետաձգում

Պատվիրատուն կարող է, Խորհրդատուին գրավոր ծանուցում ներկայացնելով, ցանկացած պահի հետաձգել Ծրագրի կամ դրա որևէ մասի

the whole or a part of the Project being adjourned, the Consultant shall be compensated for all work completed up to the date of adjournment plus any reasonable and justifiable costs for demobilization and/or adjournment within 30 calendar days of such adjournment. If any such adjournment is for more than six months, the Consultant shall be entitled to terminate this Agreement.

6 The Client's Undertakings

6.1 The Client or the Beneficiary shall designate, when necessary, a representative authorized to act on the Client's and the Beneficiary's behalf with respect to the Project. Such authorized representative shall examine the documents submitted by the Consultant and shall render decisions pertaining thereto promptly, to avoid unreasonable delay in the progress of the Consultant's Services.

6.2 The Client and the Beneficiary shall furnish required information and shall render approvals and decisions as expeditiously as necessary for the orderly progress of the Services.

7 Termination of the Agreement

7.1 The Client can terminate this Agreement at any time by giving a written termination notice to the Consultant.

7.2 The Consultant can terminate this Agreement if the invoices are not paid by the Client repeatedly on due date or in observance with Article 4 (*Payments from the Client*) by giving a written termination notice to the Client and the Beneficiary.

7.3 In case of termination of the Agreement, the Consultant shall stop work immediately after receiving or sending the written termination

իրականացումը: Ծրագրի ամբողջությամբ կամ մասնակիորեն հետաձգման դեպքում, հետաձգումից 30 օրացուցային օրվա ընթացքում, Խորհրդատուին փոխհատուցում կտրվի մինչև հետաձգման օրը կատարված բոլոր աշխատանքների համար գումարած դադարեցման և (կամ) հետաձգման հետ կապված ցանկացած ողջամիտ և հիմնավորված ծախս: Եթե որևէ այդպիսի հետաձգման տևողություն գերազանցի վեց ամիսը, ապա Խորհրդատուն իրավունք կունենա դադարեցնելու սույն Պայմանագիրը:

Պատվիրատուի պարտավորությունները

Պատվիրատուն կամ Շահառուն, անհրաժեշտության դեպքում, պետք է նշանակեն ներկայացուցիչ, որը Ծրագրի շրջանակներում լիազորված է գործելու Պատվիրատուի և Շահառուի անունից: Այդպիսի լիազորված ներկայացուցիչը պետք է ուսումնասիրի Խորհրդատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, և անհապաղ որոշումներ կայացնի դրանց վերաբերյալ՝ Խորհրդատուի Ծառայությունների տրամադրման ընթացքի անհիմն ձգձգումներից խուսափելու համար:

Պատվիրատուն և Շահառուն պետք է տրամադրեն պահանջվող տեղեկատվությունը և տրամադրեն հաստատումներ և կայացնեն որոշումներ որքան հնարավոր է արագ, որպեսզի ապահովվի Ծառայությունների մատուցման կանոնավոր առաջընթացը:

Պայմանագրի դադարեցում

Պատվիրատուն ցանկացած պահի կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը՝ Խորհրդատուին ներկայացնելով դադարեցման մասին գրավոր ծանուցում:

Խորհրդատուն կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը, եթե Պատվիրատուի կողմից հաշիվ-ապրանքագրերը բազմիցս չեն վճարվել սահմանված ժամկետներում կամ 4-րդ հոդվածի (*Պատվիրատուի կողմից կատարվող վճարումները*) պահանջների պահպանմամբ՝ Պատվիրատուին և Շահառուին ներկայացնելով դադարեցման մասին գրավոր ծանուցում:

Պայմանագրի դադարեցման դեպքում Խորհրդատուն պետք է դադարեցնի աշխատանքները, ըստ կիրառելիության, դադարեցման մասին գրավոր

notice, as the case may be, and report the status of work within one month. This report should describe the status and amount of work progressed until the date of termination also stating the compensation due.

7.4 In case of termination of the Agreement, the Consultant shall be compensated for all services performed to the termination date, and the Client and the Beneficiary shall respect the Consultant's intellectual property.

8 Property Rights/ Intellectual Properties, Copyrights

8.1 All intellectual property, including but not limited to guides, guidelines, presentations, governance models, governance concepts, reports, visions, designs, action plans and any other written work and work product of any nature whether or not patentable or copyrightable, developed, or created by the Consultant in the course of providing the Services under this Agreement shall be the exclusive property of the Client. The Consultant agrees to promptly disclose and assign to the Client any assignable rights to the intellectual property developed or created by the Consultant in the course of providing the Services under this Agreement. The Consultant agrees to provide reasonable assistance in protecting and enforcing the Client's intellectual property rights. Such assistance shall be commensurate with the Consultant's expertise and resources and shall not unduly burden the Consultant. The Consultant shall cooperate with the Client in good faith to fulfill these obligations.

ծանուցումն ստանալուց կամ ուղարկելուց անմիջապես հետո, և մեկ ամսվա ընթացքում զեկուցի աշխատանքների կարգավիճակի մասին: Այս հաշվետվությունը պետք է պարունակի մինչև դադարեցման ամսաթիվը կատարված աշխատանքների կարգավիճակի և ծավալի մասին տեղեկություն, ինչպես նաև նշում՝ վճարման ենթակա փոխհատուցման գումարի մասին:

Պայմանագրի դադարեցման դեպքում Խորհրդատուին պետք է փոխհատուցում տրվի՝ մինչև Պայմանագրի դադարեցման ամսաթիվը մատուցված բոլոր ծառայությունների համար, և Պատվիրատուն ու Շահառուն պետք է պահպանեն Խորհրդատուի մտավոր սեփականության իրավունքը:

Սեփականության իրավունք/ Մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք

Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ընթացքում Խորհրդատուի կողմից ստեղծված կամ մշակված՝ մտավոր սեփականության բոլոր օբյեկտները՝ ներառյալ ուղեցույցները, սահիկաշարերը, կառավարման մոդելները, կառավարման հայեցակարգերը, հաշվետվությունները, տեսլականները, նախագծերը, գործողությունների ծրագրերը և ցանկացած այլ գրավոր աշխատանք և աշխատանքի արդյունք՝ անկախ արտոնագրային կամ հեղինակային իրավունքով պաշտպանված լինելու կամ չլինելու հանգամանքից, Պատվիրատուի բացառիկ սեփականությունն են: Խորհրդատուն համաձայնում է անհապաղ բացահայտել և Պատվիրատուին փոխանցել ցանկացած փոխանցելի իրավունք՝ սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ընթացքում Խորհրդատուի կողմից ստեղծված կամ մշակված մտավոր սեփականության նկատմամբ: Խորհրդատուն համաձայնում է ողջամտորեն աջակցել Պատվիրատուին մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և կիրարկման հարցում: Այդ աջակցությունը պետք է համարժեք լինի Խորհրդատուի փորձառությանը և ռեսուրսներին և չպետք է անհարկի ծանրաբեռնի Խորհրդատուին: Խորհրդատուն պետք է բարեխղճորեն համագործակցի Պատվիրատուի հետ՝ այս պարտականությունները կատարելու նպատակով:

8.2 Each Party acknowledges that all pre-existing intellectual property of the other Parties shall remain the exclusive property of such Parties.

8.3 The Consultant shall not use, disclose, or reproduce any intellectual property belonging to the Client without the Client's prior written consent. This provision shall survive the termination or expiration of this Agreement. For the avoidance of doubt, the Consultant retains the right to use any intellectual property developed or created by the Consultant in rendering the Services for personal portfolio and self-promotion purposes, as well as as a reference for future work. The Consultant agrees to ensure that any use of the intellectual property retained for personal purposes does not conflict with the Client's interests or breach any confidentiality obligations.

8.4 In case of termination of this Agreement, or at any other time, upon the Client's request, the Consultant shall immediately return to the Client any and all intellectual property that has been received, developed, or created in the course of providing the Services under this Agreement.

9 Confidentiality

9.1 All information (including the terms of this Agreement) provided by either Party to the other Parties (with the exception of publicly available information) which is identified or marked by the disclosing Party as confidential or proprietary information or that reasonably should be known to be confidential, shall be treated in a confidential manner and shall not be disclosed to any third party without the prior written consent of the disclosing Party, which consent shall not be unreasonably withheld.

Յուրաքանչյուր Կողմ ընդունում է, որ մյուս Կողմերի՝ նախկինում գոյություն ունեցող մտավոր սեփականության բոլոր օբյեկտները կմնան այդ Կողմերի բացառիկ սեփականությունը:

Խորհրդատուն չպետք է օգտագործի, բացահայտի կամ վերարտադրի Պատվիրատուին պատկանող մտավոր սեփականության որևէ օբյեկտ՝ առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության: Սույն դրույթը գործում է սույն Պայմանագրի դադարեցումից կամ գործողության ժամկետի ավարտից հետո: Կասկածից խուսափելու համար՝ Խորհրդատուն իրավունք ունի օգտագործելու Ծառայությունները մատուցելու նպատակով Խորհրդատուի կողմից մշակված կամ ստեղծված՝ մտավոր սեփականության ցանկացած օբյեկտ՝ անձնական պորտֆոլիոյի և ինքնագովազդային նպատակներով, ինչպես նաև որպես հղման աղբյուր հետագա աշխատանքի համար: Խորհրդատուն համաձայնում է ապահովել, որ անձնական նպատակներով պահպանվող մտավոր սեփականության ցանկացած օբյեկտի օգտագործում չհակասի Պատվիրատուի շահերին կամ դրանով չխախտվի գաղտնիության որևէ պարտավորություն:

Սույն Պայմանագրի դադարեցման դեպքում կամ ցանկացած այլ ժամանակ Պատվիրատուի խնդրանքով Խորհրդատուն պետք է անմիջապես Պատվիրատուին ամբողջությամբ վերադարձնի մտավոր սեփականության բոլոր օբյեկտները, որոնք ստացվել, մշակվել կամ ստեղծվել են սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ընթացքում:

Գաղտնիություն

Բոլոր այն տեղեկությունները (ներառյալ սույն Պայմանագրի դրույթները), որոնք տրամադրվել են Կողմերից մեկի կողմից մյուսներին (բացառությամբ հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության) և որոնք տրամադրող Կողմը սահմանել կամ նշել է որպես գաղտնի տեղեկատվություն կամ որոնք ողջամտորեն պետք է դիտարկվեն՝ որպես գաղտնի, պետք է համարվեն գաղտնի և չպետք է բացահայտվեն որևէ երրորդ կողմի առանց տրամադրող Կողմի նախնական գրավոր համաձայնության, որը չպետք է անհիմն կերպով չտրամադրվի:

9.2 The confidentiality obligation under this Agreement shall survive the termination or expiration of this Agreement and shall remain in force for a period of five years upon such termination or expiration.

10 Term of the Agreement

The Agreement shall enter into force on the date of execution by all Parties and shall remain in full force and effect until all Services under this Agreement have been provided to the satisfaction of the Client and the Beneficiary, and all payments under this Agreement have been made by the Client, without prejudice to paragraphs 8.3 and 9.2 of the Agreement.

11 Liability

The Consultant shall be liable to the Client for the performance of the Services in accordance with the provisions of this Agreement and the relevant statutory provisions during the period of one year after the completion of the Services to the satisfaction of the Client and the Beneficiary. The Consultant's liability shall be limited to the amount of the agreed fee, except in cases of intent or gross negligence.

12 Force Majeure

Neither Party shall be liable for the failure to perform or delay in performance of its obligations under this Agreement, other than payment obligations, if such failure is caused by unforeseeable circumstances beyond the Party's reasonable control, including, without limitation, war, riot, embargoes, acts of terrorism or sabotage, fire, flood, earthquake, accident, strikes, radiation, inability to secure transportation ("**Force Majeure**"). The Party affected by the Force Majeure shall (i) give written notice of suspension of its obligations as soon as reasonably practicable stating the date and extent of such suspension and the cause thereof, (ii) use its best efforts to remedy or remove such Force Majeure with the least

Սույն Պայմանագրով նախատեսված՝ գաղտնիության պարտավորությունն ուժի մեջ է մնում և շարունակում է գործել՝ Պայմանագրի դադարեցումից կամ ժամկետի ավարտից հետո՝ հինգ տարի ժամկետով:

Պայմանագրի ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի կողմից ստորագրման օրվանից և գործում է՝ մինչև սույն Պայմանագրով նախատեսված բոլոր Ծառայությունների տրամադրումը՝ Պատվիրատուի և Շահառուի պահանջներին համապատասխան, և Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրով նախատեսված բոլոր վճարումների կատարումը՝ առանց սահմանափակելու Պայմանագրի 8.3 և 9.2 հոդվածները:

Պատասխանատվություն

Խորհրդատուն Ծառայությունների մատուցման համար պատասխանատվություն է կրում Պատվիրատուի առջև, սույն Պայմանագրի դրույթների և համապատասխան օրենսդրական դրույթների համաձայն, Պատվիրատուի և Շահառուի պահանջներին համապատասխան՝ Ծառայությունների մատուցման ավարտից հետո մեկ տարվա ընթացքում: Խորհրդատուի պատասխանատվությունը սահմանափակվում է համաձայնեցված վճարի չափով՝ բացառությամբ դիտավորության կամ կոպիտ անփութության դեպքերի:

Ֆորս մաժոր

Որևէ Կողմ պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար, բացառությամբ վճարման պարտավորությունների, եթե այդպիսի պարտավորությունների չկատարումը պայմանավորված է Կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս գտնվող անկանխատեսելի հանգամանքներով, այդ թվում, սակայն առանց սահմանափակման՝ պատերազմ, ապստամբություն, էմբարգոներ, ահաբեկչություն կամ սաբոտաժ, հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, դժբախտ պատահար, գործադուլ, ճառագայթում, փոխադրում ապահովելու անկարողություն (այսուհետ՝ «**Ֆորս Մաժոր**»): Ֆորս Մաժորից տուժած Կողմը պետք է (i) գրավոր ծանուցի իր պարտավորությունների

practicable delay, and (iii) resume the performance of its obligations as soon as reasonably practicable after the remediation or removal of the cause.

կասեցման մասին՝ որքան ողջամտորեն հնարավոր է շուտ՝ նշելով այդ կասեցման ամսաթիվն ու ծավալը և դրա պատճառները, (ii) գործադրի իր լավագույն ջանքերը Ֆորս Մաժորը նվազագույն ուշացումով կարգավորելու կամ վերացնելու համար, և (iii) վերսկսի իր պարտավորությունների կատարումը կարգավորումից կամ պատճառների վերացումից հետո՝ որքան հնարավոր է շուտ:

13 Language

This Agreement is executed in parallel in English and Armenian versions. In case of any dispute as to the proper interpretation or in case of any inconsistency between the English and the Armenian versions of this Agreement, the English text shall prevail. Any sort of Project-related correspondence is agreed to be in English only.

Պայմանագրի լեզու

Սույն Պայմանագիրը կնքվում է գուգահեռաբար անգլերեն և հայերեն տարբերակներով: Սույն Պայմանագրի ճշգրիտ մեկնաբանման կապակցությամբ առաջացող տարաձայնությունների դեպքում կամ անգլերեն և հայերեն տարբերակների միջև հակասությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը: Ծրագրին վերաբերող ցանկացած հաղորդակցություն կատարվելու է միայն անգլերենով:

14 Applicable Law

This Agreement shall be governed by and interpreted and construed in accordance with the laws of the Republic of Armenia.

Կիրառելի օրենք

Սույն Պայմանագիրը պետք է կարգավորվի և մեկնաբանվի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

15 Dispute Resolution

15.1 If any issue, dispute, difference, or claim arises out of or in connection with this Agreement, including any issue regarding its existence, validity, performance, or termination (“Dispute”), of which a Party has given written notice to the other Parties, senior management personnel from the Parties shall meet and diligently attempt to resolve the Dispute in good faith.

Վեճերի լուծում

Սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված որևէ խնդրի, վեճի, հակասության կամ պահանջի դեպքում, այդ թվում՝ Պայմանագրի գոյության, վավերության, կատարման կամ դադարեցման հետ կապված որևէ խնդրի (այսուհետ՝ «Վեճ») դեպքում, որի մասին Կողմը գրավոր ծանուցել է մյուս Կողմերին, Կողմերի ղեկավար մարմինները պետք է հանդիպեն և գործադրեն լավագույն ջանքերը՝ Վեճը բարեխղճորեն լուծելու համար:

15.2 Either Party may, on or after the date falling 30 days after the date that a written notice was received in accordance with Article 15.1, refer a Dispute for arbitration in accordance with the Arbitration Rules of the International Chamber of Commerce, the decision of which shall be binding on the Parties.

Յուրաքանչյուր Կողմ կարող է 15.1 հոդվածի համաձայն գրավոր ծանուցում ստանալու օրվանից 30-րդ օրը կամ դրանից հետո Վեճն ուղարկել, Միջազգային առևտրային պալատի արբիտրաժային կանոնների համաձայն, արբիտրաժի լուծման, որի որոշումը պարտադիր է Կողմերի համար:

15.3 The seat of arbitration shall be Geneva, Switzerland.

Արբիտրաժի նստավայրն է Ժնևը, Շվեյցարիա:

15.4 The language of the arbitration and all correspondence and documentation related to

Արբիտրաժի լեզուն անգլերենն է, և դրա հետ կապված ամբողջ հաղորդակցությունը և փաստաթղթերը պետք

it is English. The number of arbitrators shall be one to be appointed by the Court, as defined in the Arbitration Rules of the International Chamber of Commerce.

16 Severability

In the event that any clause or provision of this Agreement or any part thereof becomes or shall be declared by a court of competent jurisdiction invalid, illegal, void, or unenforceable, this Agreement shall continue in full force and effect without said provisions.

17 The Entire Agreement

This Agreement, including all its Appendices, embody the entire agreement and understanding of the Parties with respect to the subject matter hereof and supersede all prior or contemporaneous agreements and understandings of the Parties, verbal or written, relating to the subject matter hereof.

18 Amendments

The provisions of this Agreement may be waived, supplemented, or amended only by an instrument in writing signed by the authorized representatives of the Parties.

19 Counterparts

This Agreement may be executed in several counterparts, each of which shall be deemed an original, but all of which together shall constitute one and the same agreement. The Agreement is executed in three original copies. Each Party holds one copy hereof.

է լինեն անգլերեն: Արբիտրանտերի թիվը մեկն է, որը նշանակվելու է Դատարանի կողմից, ինչպես սահմանված է Միջազգային առևտրային պալատի արբիտրաժային կանոններով:

Դրույթների մասնատելիություն

Այն դեպքում, երբ սույն Պայմանագրի որևէ կետ կամ դրույթ կամ դրա որևէ մաս իրավասու դատարանի կողմից ճանաչվի անվավեր, անօրինական, կամ ոչ կիրառելի, սույն Պայմանագիրը կշարունակի գործել՝ առանց նշված դրույթների:

Ամբողջական պայմանագիր

Սույն Պայմանագիրը, այդ թվում՝ դրա բոլոր Հավելվածները, ներառում է Կողմերի ամբողջական համաձայնությունն ու փոխըմբռնումը սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ և փոխարինում է սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ Կողմերի նախորդող կամ առկա բոլոր բանավոր կամ գրավոր համաձայնություններն ու ըմբռնումները:

Փոփոխություններ

Սույն Պայմանագրի դրույթներից կարելի է հրաժարվել, դրանք կարող են լրացվել կամ փոփոխվել միայն Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված գրավոր փաստաթղթի հիման վրա:

Օրինակներ

Սույն Պայմանագիրը կարող է կնքվել է մի քանի օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, բայց բոլորը միասին կազմում են նույն մեկ պայմանագիրը: Պայմանագիրը կնքվում է երեք բնօրինակով: Յուրաքանչյուր Կողմի տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

IN WITNESS WHEREOF, the undersigned have caused this Agreement to be executed as of the date first written above.

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ, ներքոստորագրյալները սույն Պայմանագրի սկզբնամասում նշված օրը կնքեցին սույն Պայմանագիրը:

FOR CLIENT

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Signature

Ստորագրություն

Name: Sargis Hayotsyan

Անուն՝ Սարգիս Հայոցյան

Title: Chairman

Պաշտոն՝ նախագահ

FOR CONSULTANT
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Signature
Ստորագրություն

Name: Jochen Rabe
Անուն՝ Յոհան Բաբե
Title: Managing Director
Պաշտոն՝ գործադիր տնօրեն

FOR BENEFICIARY
ՇԱՀԱՌՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Signature
Ստորագրություն

Name: Armen Simonyan
Անուն՝ Արմեն Սիմոնյան
Title: Director
Պաշտոն՝ տնօրեն

Appendix No. 1 Scope of Services

Հավելված 1 Ծառայությունների շրջանակը

1. Scope of Work for Strategic Urban Development Framework

1.1 Design of Strategic Urban Development Framework

Strategic Urban Development Framework

Due to existing research and design work on the Academic City, the Consultant has gained a deep understanding of the Project site and the Project. The Consultant will prepare a strategic urban development framework aligned with the existing concept and emerging detailed masterplan. The final result will be a strategic urban development framework produced by the Consultant which provides the Client with a clear and structured strategic concept for the further development of the Academic City. The Services will conclude with the submission of a final report.

Deliverables

Value Proposition Document

The Value Proposition Document is a document that elaborates the overarching value proposition of the Project including a specific section per key stakeholder group. It is based on available policies and concepts and stakeholder interviews to be held as part of the Strategic Urban Development Framework.

Format: 2 pages including half a page for specific stakeholder groups (up to 5)

Strategic Integration of the Academic Transformation Strategy into the Masterplan

This deliverable provides overview of achieved milestones, challenges to be addressed and upcoming phases in the integration process. It will

1. Քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի աշխատանքի ծավալը

1.1 Քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը

Քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակը

Ակադեմիական քաղաքի վերաբերյալ առկա հետազոտական և նախագծման աշխատանքների իրականացման արդյունքում Խորհրդատուն խորքային պատկերացում է ձևավորել Ծրագրի տեղանքի և Ծրագրի վերաբերյալ: Խորհրդատուն մշակելու է քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակ, որը համահունչ կլինի գլխավոր հատակագծի հայեցակարգին և մշակման փուլում գտնվող՝ մանրամասն հատակագծին: Վերջնարդյունքը լինելու է Խորհրդատուի կողմից պատրաստված քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակը, որը Պատվիրատուին տալիս է Ակադեմիական քաղաքի հետագա զարգացման հստակ և համակարգված ռազմավարական հայեցակարգ: Ծառայությունների տրամադրումը կամփոփվի վերջնական հաշվետվության ներկայացմամբ:

Ներկայացվող նյութերը

Ծրագրի կարևորության նկարագրություն

Ծրագրի կարևորության նկարագրությունը փաստաթուղթ է, որով նախատեսվում է Ծրագրի կարևորության բազմակողմանի մանրամասն նկարագրությունը՝ այդ թվում առանձին բաժին՝ շահառուների յուրաքանչյուր խմբի համար: Այն հիմնված է լինելու առկա ռազմավարությունների, հայեցակարգերի, շահառուների հետ հարցազրույցների վրա, որոնք կանցկացվեն որպես քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մաս:

Ձևաչափ. 2 էջ՝ այդ թվում կես էջ՝ շահառուների յուրաքանչյուր խմբի (մինչև 5) համար

Ակադեմիական վերափոխման ռազմավարության ռազմավարական ինտեգրում գլխավոր հատակագծի հայեցակարգում

Ներկայացվելիք այս փաստաթղթով տրամադրվում է ձեռքբերումների, մարտահրավերների և ինտեգրման

tie the Project (we are assuming a more inward, organisational development focus) to the regional and national development targets, the development phases and the associated infrastructure requirements.

Format: Database and 2 pages in final report / Continuous integration with masterplanning team

Stakeholder Mapping and Review of Phased Communication Strategy

This deliverable will provide an overview of the identified stakeholders, their roles, and their area and level of influence. It will also outline their interests, concerns, and potential impact on the Project based on desktop research or interviews where possible. The report will serve as a resource for developing a targeted communication strategy and ensuring stakeholder engagement throughout the development process.

Format: Database and summary in final report per consulted stakeholder groups (up to 5)

Preliminary Research on Key Livability Indicators

The result will include an analysis of the key livability aspects in the Academic City including KPI categories (where possible/existing), such as demographics, healthcare, mobility, living environment, housing, education, and business conditions. Where possible KPIs will be set in collaboration with the Client or stakeholders or based on international best practice.

Format: Database, integration in phasing of the masterplan and summary in final report

գործընթացի առաջիկա փուլերի վերաբերյալ ընդհանուր պատկերացում: Այն Ծրագիրը կկապի (ներքին կազմակերպական զարգացման ուղղվածությամբ) տարածաշրջանային և ազգային զարգացման թիրախներին, զարգացման փուլերին և հարակից ենթակառուցվածքների զարգացման պահանջներին: **Ձևաչափ.** Տվյալների բազա և 2 էջ վերջնական հաշվետվությունում/ շարունակական ինտեգրում գլխավոր հատակագիծը նախագծող թիմի հետ

Շահառուների քարտեզագրում և փուլային հաղորդակցության ռազմավարության վերանայում

Ներկայացվելիք այս փաստաթղթով կկազմվի շահառուների, նրանց դերերի, ինչպես նաև ազդեցության գոտու և մակարդակի վերաբերյալ ընդհանուր պատկերացում: Փաստաթղթով նաև կուրվագծվեն նրանց հետաքրքրությունների շրջանակը, մտահոգությունները և Ծրագրի վրա հնարավոր ազդեցությունը՝ հիմնվելով գրասենյակային ուսումնասիրությունների կամ, ըստ հնարավորության, հարցազրույցների վրա: Հաշվետվությունը կծառայի նաև որպես նպատակային հաղորդակցության ռազմավարություն մշակելու համար նյութ և կապահովի շահառուների ներգրավվածությունը մշակման գործընթացին:

Ձևաչափ. Տվյալների բազա և շահառուների յուրաքանչյուր խմբի (մինչև 5) համար ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Կենսագործունեության հիմնական ցուցիչների նախնական ուսումնասիրություն

Ուսումնասիրության արդյունքը կներառի Ակադեմիական քաղաքում կենսագործունեության հիմնական ասպեկտների վերլուծություն՝ այդ թվում ըստ արդյունավետության առանցքային այնպիսի ցուցանիշների (ըստ առկայության), ինչպիսիք են՝ ժողովրդագրությունը, առողջապահությունը, շարժունակությունը, կենսամիջավայրը, բնակարանային ապահովումը, կրթությունը և բիզնես պայմանները: Հնարավորության դեպքում արդյունավետության առանցքային ցուցանիշներ կսահմանվեն Պատվիրատուի կամ շահառուների հետ համագործակցությամբ կամ միջազգային լավագույն փորձի հիման վրա:

Ձևաչափ. Տվյալների բազա, գլխավոր հատակագծում փուլային ինտեգրում և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Outline Innovation Ecosystem Framework

Supporting the Client in integrating the innovation ecosystem framework into the masterplan and its phases to achieve maximum leverage, setting targets based on international standards, in particular, of international universities and research institutions.

Format: Database and summary in final report

Smart City Technology Recommendation

The Smart City Technology Recommendation will provide a comprehensive list of potential ‘smart city’ options that could be deployed at the Academic City including a high-level cost-benefit rating. This report will include existing smart city solutions that might be incorporated into the future planning stages.

Format: Database and summary in final report

SWOT Analysis: current state of the national, regional and local infrastructure and context and key assets of relevance to the Academic City

This deliverable will provide a SWOT analysis of infrastructure and other key assets relevant to the Academic City.

Format: Database and summary in final report

Identification of key sustainability standards applicable for the Academic City from international funding bodies and gap analysis to GMP Green Dialogue

This deliverable will establish a criteria and goals framework. The criteria established in the GMP Green Dialogue will be assessed and aligned to international best practice such as the UN Sustainable Development Goals or other KPIs

Ինովացիոն Էկոհամակարգի շրջանակի ընդհանուր նկարագիր

Առավելագույն լծակներ ապահովելու նպատակով՝ աջակցել Պատվիրատուին ինտեգրելու ինովացիոն Էկոհամակարգի շրջանակը գլխավոր հատակագծում և դրա զարգացման փուլերում՝ սահմանելով միջազգային չափանիշների վրա հիմնված թիրախներ, հատկապես՝ կենտրոնանալով միջազգային համալսարանների և գիտահետազոտական հաստատությունների չափանիշների վրա:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Խելացի քաղաքի տեխնոլոգիաների վերաբերյալ առաջարկություն

Խելացի քաղաքի տեխնոլոգիաների վերաբերյալ առաջարկությամբ նախատեսում է տրամադրել հնարավոր «խելացի քաղաքի» այնպիսի տարբերակների համապարփակ ցանկ, որոնք կարող են կիրառվել Ակադեմիական քաղաքում՝ ներառելով բարձր մակարդակի ծախս-եկամուտ վերլուծություն: Այս հաշվետվությունը կներառի խելացի քաղաքի առկա լուծումներ, որոնք կարող են ընդգրկվել հետագա պլանավորման փուլերում:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

SWOT վերլուծություն. ազգային, տարածաշրջանային և տեղական ենթակառուցվածքների վիճակը, ինչպես նաև Ակադեմիական քաղաքին վերաբերելի առանցքային ակտիվները

Ներկայացվելիք այս փաստաթղթի շրջանակներում կիրականացվի Ակադեմիական քաղաքի ենթակառուցվածքների և այլ առանցքային ակտիվների SWOT վերլուծություն:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Միջազգային ֆինանսավորող մարմինների՝ Ակադեմիական քաղաքի համար կիրառելի կայունության հիմնական ստանդարտների բացահայտում և GMP կանաչ երկխոսության բացերի վերլուծություն

Ներկայացվելիք այս փաստաթղթով կսահմանվի չափանիշների և նպատակների շրջանակ: GMP կանաչ երկխոսությամբ սահմանված չափանիշները կգնահատվեն և կհամապատասխանեցվեն միջազգային լավագույն փորձին, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները (UN SDGs) կամ միջազգային ֆինանսավորող մարմինների կողմից պահանջվող արդյունավետության

required by international funding bodies. Potential gaps will be explored.

Format: Database and summary in final report

High level climate change exposure desktop assessment / List of potential mitigation measures

This deliverable will provide a high-level assessment of the vulnerability of the Academic City to climate change, including the identification of key environmental challenges such as drought and increasing storm events. It will outline mitigation measures to address these challenges and will be collaboratively developed with input from the Client, GMP and optional local specialists to be engaged by the Consultant. This will be a stepping stone for the environmental impact assessment to be developed later in the process (according to Armenian law and international standards).

Format: Database and summary in final report

Preliminary Social Infrastructure Research

The result should provide an update on the current status of the social infrastructure development approach. It should include an overview of the research findings, key insights, and preliminary recommendations. Collaboration with the Client, GMP and optional local specialists to be engaged by the Consultant is essential to ensure the relevance of the deliverable for the Academic City.

Format: Database and summary in final report

Economic Trend Analysis and Potential

The preliminary economic trend analysis will involve an initial assessment of the current economic landscape, identification of potential areas for growth and improvement, and an analysis of the impact of various economic factors on the

առանցքային այլ ցուցանիշներ: Կուսումնասիրվեն պոտենցիալ բացերը:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Կլիմայի փոփոխության ազդեցության վերաբերյալ բարձր մակարդակի գրասենյակային գնահատում/հնարավոր մեղմացնող միջոցառումների ցանկ

Ներկայացվելիք այս փաստաթղթի շրջանակներում կիրականացվի կլիմայի փոփոխության նկատմամբ Ակադեմիական քաղաքի խոցելիության բարձր մակարդակի գնահատում, ներառելով՝ հիմնական բնապահպանական մարտահրավերների բացահայտումը, ինչպիսիք են՝ երաշտը և փոթորկի դեպքերի ավելացումը: Նշվելու են այդ մարտահրավերներին դիմակայելու համար մեղմացնող միջոցառումներ, և նյութը մշակվելու է համատեղ Պատվիրատուի, GMP-ի և Խորհրդատուի կողմից ներգրավված տեղական մասնագետների՝ մասնակցությամբ: Սա կհամարվի որպես սկզբնաքար՝ հետագա գործընթացի շրջանակներում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը մշակելու գործընթացում (Հայաստանի օրենսդրության և միջազգային չափանիշներին համաձայն):

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Սոցիալական ենթակառուցվածքների նախնական հետազոտություն

Արդյունքը պետք է ներառի սոցիալական ենթակառուցվածքների զարգացման մոտեցման ներկա վիճակի վերաբերյալ տեղեկատվության թարմացում: Այն պետք է ներառի հետազոտության արդյունքների, հիմնական պատկերացումների և նախնական առաջարկությունների վերաբերյալ ընդհանուր նկարագիր: Պատվիրատուի, GMP-ի և Խորհրդատուի կողմից ներգրավված տեղական մասնագետների համագործակցությունը կարևոր է Ակադեմիական քաղաքի համար ներկայացվող նյութերի վերաբերելիությունն ապահովելու համար:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Տնտեսական միտումների վերլուծություն և ներուժ

Տնտեսական միտումների նախնական վերլուծությունը ներառելու է առկա տնտեսական դաշտի նախնական գնահատում, զարգացման և բարելավման համար հնարավոր ոլորտների բացահայտում և Ակադեմիական քաղաքի վրա տարբեր տնտեսական գործոնների և տարբեր

Academic City and vice versa. This analysis will provide valuable insights to guide the development and phasing of the Academic City masterplan implementation, setting the foundation for sustainable economic growth with a particular focus on the initial stages of the Academic City Project implementation. The deliverable will include a database of key economic strategies and players relevant to the Academic City, along with a summary of the findings in the report. This work will be conducted collaboratively with the Client and local specialists to be engaged by the Consultant.

Format: Database and summary in final report

Operational and Governance Model Concept Development for Urban Functions of the Academic City Project

This deliverable involves the development of governance and management models for the Academic City Project's urban functions, including transportation, utilities, and public spaces. It includes an assessment of public versus private sector management models informed by international best practices, recommendations for legal frameworks to involve private operators where advantageous, and a review of relevant models from TUM International GmbH. The final report will contain recommendations on the proposed governance and management models.

Format: Database and 4-page summary in final report

Qualitative Infrastructure Assessment Report

This deliverable entails conducting a comprehensive qualitative assessment of the current key infrastructure to identify any gaps or deficiencies based on existing information, desktop research and where possible stakeholder interviews. Furthermore, the team will analyse the projected growth and development of the Academic City to determine the future

տնտեսական գործոնների վրա Ակադեմիական քաղաքի ազդեցության վերլուծություն: Այս վերլուծությամբ կներկայացվեն Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի կիրարկման և փուլային զարգացման գործընթացն ուղղորդելու արժեքավոր պատկերացումներ՝ ստեղծելով կայուն տնտեսական աճի հիմքեր՝ միաժամանակ հատուկ շեշտ դնելով Ակադեմիական քաղաքի ծրագրի իրականացման նախնական փուլերի վրա: Ներկայացվող նյութերը կներառեն հիմնական տնտեսական ռազմավարությունների և Ակադեմիական քաղաքին վերաբերելի դերակատարների տվյալների բազա՝ հաշվետվությունում արդյունքների ամփոփ նկարագրի հետ մեկտեղ: Այս աշխատանքն համատեղ իրականացվելու է Պատվիրատուի և Խորհրդատուի կողմից ներգրավված տեղական մասնագետների հետ:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում
Ակադեմիական քաղաքի ծրագրի քաղաքային գործառույթների համար գործառնական և կառավարման մոդելի հայեցակարգի մշակում

Ներկայացվելիք այս նյութը ներառում է ղեկավարման և կառավարման մոդելների մշակում Ակադեմիական քաղաքի ծրագրի քաղաքային գործառույթների համար՝ ներառյալ տրանսպորտը, կոմունալ ծառայությունները և հանրային տարածքները: Այն ներառում է միջազգային լավագույն փորձի հիման վրա հանրային և մասնավոր հատվածի կողմից կառավարման մոդելների գնահատում, ըստ նպատակահարմարության՝ մասնավոր օպերատորների ներգրավման իրավական շրջանակների վերաբերյալ առաջարկություններ, և TUM International GmbH-ի մշակած համապատասխան մոդելների վերանայում: Վերջնական հաշվետվությունը կպարունակի առաջարկություններ առաջարկվող ղեկավարման և կառավարման մոդելների վերաբերյալ:

Ձևաչափ. Տվյալների բազա և 4 էջից բաղկացած նկարագիր վերջնական հաշվետվությունում

Ենթակառուցվածքների որակական գնահատման հաշվետվություն

Ներկայացվելիք այս փաստաթղթի շրջանակներում ենթադրվում է իրականացնել գոյություն ունեցող հիմնական ենթակառուցվածքների համապարփակ որակական գնահատում՝ առկա տեղեկատվության, գրասենյակային ուսումնասիրության և ըստ հնարավորության՝ շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների միջոցով բացերն ու թերությունները բացահայտելու նպատակով: Այնուհետև, թիմը կվերլուծի

infrastructure requirements and their correlation. This will include technical assessments and strategies as well as cost consultancies.

Format: Database and summary in final report

Integrating SUDF and findings in the Detailed Masterplan

Work with GMP, the Client and its subcontractors, as necessary, to integrate findings in spatial concept for the Academic City.

Format: Continuous integration with GMP, the Client and its subcontractors, as necessary

High-level Risk and Vulnerability Register

This report provides a high-level assessment of potential risks and vulnerabilities in the development path. It includes an analysis of environmental factors, socio-economic conditions, and technological risks. The report also explores mitigation options to minimize the potential impact and enhance resilience.

Format: Database and summary in final report

Scenario Assessment and Preferred Scenario to be Further Developed

This deliverable includes conducting a pro/contra analysis of up to three development scenarios, including SWOT analyses. The deliverable will conclude with an evaluation of the preferred development scenario.

Format: Database and summary in final report

Ակադեմիական քաղաքի կանխատեսվող աճն ու զարգացումը՝ ապագա ենթակառուցվածքների պահանջները և դրանց հարաբերակցությունը որոշելու նպատակով: Այս գործընթացը ներառելու է տեխնիկական գնահատումներ և ռազմավարություններ, ինչպես նաև՝ ծախսերի վերաբերյալ խորհրդատվություն:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի արդյունքների ինտեգրում գլխավոր հատակագծում

Ակադեմիական քաղաքի տարածական հայեցակարգում արդյունքները ինտեգրելու նպատակով GMP-ի, Պատվիրատուի և անհրաժեշտության դեպքում՝ վերջինիս ենթակապալառուների հետ աշխատանք:

Ձևափաչ. Շարունակական ինտեգրում GMP-ի, Պատվիրատուի և անհրաժեշտության դեպքում՝ վերջինիս ենթակապալառուների հետ

Ռիսկայնության և խոցելիության բարձր մակարդակի ռեգիստր

Այս հաշվետվությամբ կիրականացվի զարգացման ճանապարհին հնարավոր ռիսկերի և խոցելի կողմերի բարձր մակարդակի գնահատում: Այն ներառելու է բնապահպանական գործոնների, սոցիալ-տնտեսական պայմանների և տեխնոլոգիական ռիսկերի վերլուծություն: Հաշվետվությամբ ուսումնասիրվելու են նաև մեղմացող միջոցառումների տարբերակներ՝ հնարավոր ազդեցությունը նվազեցնելու և դիմադրողականությունը բարձրացնելու համար:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Սցենարների գնահատում և հետագա զարգացման ենթակա նախընտրելի սցենարի նախանշում

Ներկայացվելիք այս նյութը ներառելու է մինչև երեք զարգացման սցենարների դրական և բացասական կողմերի վերլուծություն՝ ներառյալ SWOT վերլուծությունը: Ներկայացվելիք այս նյութն ամփոփվելու է նախընտրելի զարգացման սցենարի գնահատմամբ:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Phasing Strategy Outline

The deliverable will outline the proposed plan for systematically rolling out different aspects of the Project over time, including infrastructure development, funding allocation, and stakeholder involvement and its logical interdependencies.

Format: Database and summary in final report

Outline Further Development Stages and Scope of Services of Specialists to be Involved

The deliverable will include recommendations for the implementation of the upcoming development stages and associated scope recommendations for the further involvement of up to 5 specialists (transport + mobility, infrastructure, environment, real estate and finance/cost consulting, GIS/database).

Format: Database and summary in final report

Project Design and Management Evolution

This deliverable includes the development of Project management procedure and transition into software-based system aligned to phasing strategy. The task includes assistance with the setup of the initial project plan by/with the Client team which is to be maintained by the Client team (Potential option: NOTION, if Armenian data regulation allows. Depends on current Client work-flows and project management solutions.)

Format: Database and fortnightly Jour Fixes to reflect on progress

1.2 Geoinformation System (GIS) Setup and Mapping for Strategic Urban Development Framework

For Urban Spatial Planning the Consultant will commission TSPA (www.tspa.eu) as subconsultants subject to the Client's approval.

Փուլային ռազմավարության ընդհանուր նկարագիր

Ներկայացվելիք այս նյութով կուրվագծվի ժամանակի ընթացքում Ծրագրի տարբեր ասպեկտների՝ համակարգված ձևով առաջ մղման համար առաջարկվող ծրագիրը՝ ներառյալ ենթակառուցվածքների զարգացումը, ֆինանսավորման հատկացումները և շահագրգիռ կողմերի ներգրավումը և դրանց տրամաբանական փոխկապակցվածությունը:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Զարգացման հետագա փուլերի և ներգրավվող մասնագետների ծառայությունների շրջանակի ուրվագծում

Ներկայացվելիք այս նյութը ներառելու է առաջիկա զարգացման փուլերի իրականացմանն առնչվող առաջարկություններ, ինչպես նաև մինչև 5 մասնագետների (տրանսպորտ և շարժունակություն, ենթակառուցվածքներ, շրջակա միջավայր, անշարժ գույք և ֆինանսների/ծախսերի խորհրդատվություն, GIS/տվյալների բազա) ներգրավվման համար համապատասխան ծառայությունների շրջանակի վերաբերյալ առաջարկներ:

Ձևաչափ. Տվյալների բազա և ամփոփ նկարագիր վերջնական հաշվետվությունում

Ծրագրի նախագծում և կառավարման զարգացում

Ներկայացվելիք այս նյութը ներառելու է Ծրագրի կառավարման ընթացակարգերի մշակում և անցում ծրագրային ապահովման վրա հիմնված համակարգի՝ փուլային ռազմավարությանը համահունչ: Առաջադրանքը ներառելու է աջակցություն՝ Պատվիրատուի թիմի կողմից/հետ Ծրագրի նախնական պլանի մշակման հարցում (ծրագիրը պետք է պահպանվի Պատվիրատուի թիմի կողմից) (հնարավոր տարբերակ. NOTION, եթե տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությամբ թույլատրվում է, կախված է Պատվիրատուի ներկա աշխատանքային ընթացակարգերից և ծրագրերի կառավարման լուծումներից):

Ձևաչափ. Տվյալների բազա և երկշաբաթյա ֆիքսված ժողովների միջոցով առաջընթացի քննարկում

1.2 Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) ներդնում և քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի համար քարտեզագրում

Քաղաքային տարածական պլանավորման նպատակով Խորհրդատուն կներգրավի TSPA միջազգային քաղաքային պլանավորման և նախագծման ընկերությանը

This scope of work includes setting up a GIS system, initially focusing on the local and regional site surroundings and core access routes within the site. The initial GIS model is designed to be expandable in subsequent stages.

Deliverables

GIS Data Collection and Harmonization

A preparatory desk-based activity will collect spatial data available at the local site and urban levels for relevant layers, including road and transport infrastructure, environmental/green infrastructures, and built areas (excluding building-level details). The data collection will encompass:

1. collection and evaluation of open-source geospatial data;
2. collection and integration of governmental data (if applicable);
3. integration of vectorial design base layers of the masterplan.

The outcomes of the preparatory work will include a harmonized GIS database with aggregated and filtered layers relevant for conceptual strategic urban design (in English only).

Format: GIS database.

Preliminary GIS Driven Analysis Supporting SUDF

The team will evaluate collected data using data-driven approaches to identify gaps and synergies for developing the masterplan. This involves an initial technical assessment of harmonized data, in-depth spatial analysis for strategic planning, and the visualization, packaging, and reporting of results. The assessment includes reviewing data for consistency, harmonizing formats, and identifying deficiencies. Spatial analysis will cover land use,

(www.tspa.eu)՝ որպես ենթախորհրդատու՝ Պատվիրատուի կողմից հաստատման պայմանով:

Աշխատանքի այս շրջանակը ներառելու է GIS համակարգի ներդրում՝ ի սկզբանե կենտրոնանալով տեղանքի՝ տեղական և տարածաշրջանային շրջակայքի և տեղանքի հիմնական մուտքի ճանապարհների վրա: Նախնական GIS մոդելը նախագծվելու է հետագա փուլերում ընդլայնվելու տրամաբանությամբ:

Ներկայացվող նյութեր

GIS տվյալների հավաքում և համապատասխանեցում

Նախապատրաստական գրասենյակային ուսումնասիրության միջոցով կհավաքվեն տեղանքում և համապատասխան շերտերի համար քաղաքային մակարդակներում առկա տարածական տվյալները՝ ներառյալ ճանապարհային և տրանսպորտային ենթակառուցվածքների, բնապահպանական/կանաչ ենթակառուցվածքների և կառուցապատված տարածքներին առնչվող տեղեկատվություն (բացառելով շինությունների մակարդակի մանրամասները): Տվյալների հավաքումը ներառում է.

1. բաց աղբյուրներում հասանելի աշխարհագրական տեղեկատվական տվյալների հավաքում և գնահատում,
2. պետական մարմինների բազաներում առկա տվյալների հավաքում և ինտեգրում (կիրառելիության դեպքում),
3. գլխավոր հատակագծի՝ վեկտորային ձևաչափ ունեցող հիմնական շերտերի ինտեգրում:

Նախապատրաստական աշխատանքի արդյունքները կներառեն համապատասխանեցված GIS տվյալների բազա՝ համախմբված և գտված շերտերով, որոնք վերաբերելի են հայեցակարգային ռազմավարական քաղաքաշինական զարգացման նախագծմանը (միայն անգլերենով):

Ձևաչափ. GIS տվյալների բազա

Քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակին օժանդակող նախնական GIS-համակարգի վրա հիմնված վերլուծություն

Գլխավոր հատակագծի մշակման գործընթացում բացթողումները և սիներգիաները բացահայտելու համար՝ թիմը գնահատելու է հավաքված տվյալները տվյալահեն մոտեցումների կիրառմամբ: Սա ներառում է համապատասխանեցված տվյալների նախնական տեխնիկական գնահատում, ռազմավարական պլանավորման համար մանրամասն տարածական

infrastructure, demographics, and environmental factors. The results will be presented through maps, reports, and stakeholder presentations to support the strategic urban development framework.

Format: GIS-graphics and text as part of final report

Exploratory Process for Designing and Setting Up a Spatial Data Platform

The team will explore the feasibility of developing a platform for spatial data, either as a web-based geoportal or a comprehensive geo-database. This includes consolidating the GIS database by incorporating open data sources and available governmental data to identify major information gaps, and exploring high-level data platform solutions for design development, potentially involving an IT component covered by a specialized consultant.

Format: This step will be formalized into a report/presentation outlining the potential of a data-driven platform to operationalize design processes, along with a high-level roadmap for further development in subsequent masterplan stages.

Final Deliverable

The final deliverable will comprise two components: a digital database and a printed report.

A. Digital Database

The database will be developed on Notion.so and published via Super.so for exclusive access and continuous use by the Client team. It is designed as an exclusive platform, ensuring restricted access solely to the Client's team. It will not be designed as a public website. The Notion.so database will

վերլուծություն և արդյունքների վիզուալիզացիա, փաթեթավորում և զեկուցում: Գնահատումը ներառում է հետևողականության տեսանկյունից տվյալների վերանայում, ձևաչափերի համապատասխանեցում, ինչպես նաև թերությունների բացահայում: Տարածական վերլուծությունը կներառի հողօգտագործումը, ենթակառուցվածքները, ժողովրդագրական և բնապահպանական գործոնները: Արդյունքները կներկայացվեն քարտեզների, հաշվետվությունների և շահագրգիռ կողմերի ներկայացումների միջոցով՝ օժանդակելու քաղաքային զարգացման ռազմավարական շրջանակին:

Ձևաչափ. GIS գրաֆիկա և տեքստ՝ որպես վերջնական հաշվետվության մաս

Տարածական տվյալների հարթակի նախագծման և ներդրման համար ուսումնասիրման գործընթաց

Թիմը կուսումնասիրի տարածական տվյալների հարթակի ստեղծման իրագործելիությունը՝ որպես web-ի վրա հիմնված գեոպորտալ կամ համապարփակ աշխարհագրական տվյալների բազա: Մա ներառում է GIS տվյալների բազայի համախմբում՝ ինկորպորացնելով տվյալների բաց աղբյուրները և պետական մարմինների հասանելի տվյալները՝ բացահայտելու էական տեղեկատվական բացերը, և ուսումնասիրելով բարձր մակարդակի տվյալների հարթակի լուծումները՝ դիզայնի մշակման համար (հնարավոր է ներառի SS բաղադրիչ, որը կիրականացվի մասնագիտացված խորհրդատուի կողմից):

Ձևաչափ. Այս առաջադրանքը կձևակերպվի հաշվետվության/ներկայացման տեսքով՝ ուրվագծելով նախագծման գործընթացները գործարկելու հարցում տվյալահեն հարթակի ներուժը՝ գլխավոր հատակագծի հետագա փուլերի զարգացման համար բարձր մակարդակի ճանապարհային քարտեզի հետ միասին:

Վերջնարդյունք

Վերջնարդյունքը ներառելու է երկու բաղադրիչ՝ թվային տվյալների բազա և տպագիր հաշվետվություն:

Ա. Թվային տվյալների բազա

Տվյալների բազան կմշակվի Notion.so հարթակում և կիրառարակվի Super.so-ի միջոցով՝ Պատվիրատուի թիմի կողմից բացառիկ հասանելիության և շարունակական օգտագործման համար: Այն նախատեսված է որպես բացառիկ հարթակ՝ ապահովելու համար սահմանափակ հասանելիություն բացառապես Պատվիրատուի թիմի

contain approximately 300 interlinked data entry pages along the scope outlined above. The deliverable will also include a GIS database.

B. Printed Report

The printed report will consist of approximately 100 DIN A4 pages (or 50 DIN A3 pages in landscape format). It will include at least 20-30 tables, diagrams, and graphical representations to effectively convey key insights. Additionally, detailed information from the digital database will be provided in an appendix, containing the information according to the Client's preferences.

2. Duration for Strategic Urban Development Framework

The timeframe to complete the strategic urban development framework will depend on the availability of information, specialists and stakeholders. Based on the assumption that resources will be readily available, the work programme is set for ca. 28 weeks after commissioning and the receipt of the advance payment as specified in Article 3.8 of the Agreement.

Timeline:

The 28 weeks programme kicks off after the receipt of the advance payment. Currently the following key milestones are set (subject to minor changes depending on e.g. Client, stakeholder availability):

- Trip #01 (Week 1): Client Inception Meeting
- Trip #02 (Week 6): Presentation - Initial Key Finding / Stakeholder Interviews
- Trip #03 (Week 14): Stakeholder Interview / Structure of Strategic Urban Development Framework
- Trip #04 (Week 20): Draft Urban Development Framework

համար: Այն չի նախատեսվելու որպես հանրային կայք: Notion.so տվյալների բազան կպարունակի փոխկապակցված տվյալների մուտքագրման մոտավորապես 300 էջ՝ վերը նշված ծառայությունների շրջանակի համար: Արդյունքը կներառի նաև GIS տվյալների բազա:

Բ. Տպագիր հաշվետվություն

Տպագիր հաշվետվությունը բաղկացած կլինի մոտավորապես 100 DIN A4 էջից (կամ 50 DIN A3 էջից՝ հորիզոնական ձևաչափով): Այն կներառի առնվազն 20-30 աղյուսակ, դիագրամներ և գրաֆիկական պատկերներ՝ հիմնական պատկերացումներն արդյունավետ փոխանցելու համար: Բացի դրանից, թվային տվյալների բազայից մանրամասն տեղեկատվություն կտրամադրվի հավելվածի միջոցով, որը կպարունակի տեղեկատվություն՝ Պատվիրատուի նախընտրությանը համապատասխան:

2. Տևողությունը

Քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակման աշխատանքների տևողությունը կախված է տեղեկատվության, մասնագետների և շահառուների հասանելիությունից: Հիմնվելով այն ենթադրության վրա, որ պահանջվող ռեսուրսները հասանելի կլինեն, աշխատանքների ժամկետը սահմանվում է 28 շաբաթ՝ հաշվարկված սկզբնաժամկետից և սույն պայմանագրի 3.8 հոդվածով սահմանված առաջին վճարումը ստանալուց հետո:

Ժամանակացույց

Կանխավճարը ստանալուց հետո մեկնարկում է 28 շաբաթյա ծրագիրը: Ներկայումս, նախանշվել են հետևյալ առանցքային գործողությունները (ենթակա են աննշան փոփոխությունների՝ կախված օրինակ՝ Պատվիրատուի, շահառուների հասանելիությունից)։

- Այց #01 (1-ին շաբաթ). Պատվիրատուի հետ մեկնարկային հանդիպում
- Այց #02 (6-րդ շաբաթ). հիմնական բացահայտումների ներկայացում/ հարցազրույցներ շահառուների հետ
- Այց #03 (14-րդ շաբաթ). հարցազրույց շահառուների հետ/ քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի կառուցվածք
- Այց #04 (20-րդ շաբաթ). քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի նախագծային տարբերակ

- Trip #05 (Week 26): Presentation of Final Strategic Urban Development Framework and the GIS data base/ Discussion on Next Phases and Steps

- Այց #05 (26-րդ շաբաթ). քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի վերջնական տարբերակի և GIS տվյալների բազայի ներկայացում/ հաջորդ քայլերի և փուլերի քննարկում